

դպրոց ունենալ, իսկ մինչև այժմ մեծամեծ ջանքերով կարողացել են այդ նպատակով միայն մի ողորմելի գումար, 15,620 ռ. հաւաքել (Քեանարագեաղի եղբայրասիրաց ընկերութեան գումարը)։ Մինչդեռ մի կենտրոնական միջնակարգ դպրոցի պահպանութիւնը գիտէր ինչէ պահանջում. առնուազն տարեկան 30 հազար բիւլթէ, որ անում է մօտ կէս միլիօն դրամագլխի տոկոս։ Տգէտ և աղքատ ժողովրդի կողմէնքը չեն տալ այդ գումարը, իսկ մեր հարուստները Երուսաղէմին և Էջմիածնին են կտակում իրանց հակայական կարողութեան փշաքնները։ Գոնեա, օրինակ վերցնէին Լազարեաններից և Սանատարեաններից և ոչ միջնադարեան բարեպաշտ մարդկանցից։ Միթէ ժամանակը փոփոխութիւն չէ մտցրել այդ տնաքանդների հասկացողութիւնների մէջ...

Լ. Ս.

15 դեկտ.

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 7-ին Կառավարչական Սենատին տրուած հրովարտակով ֆինանսների մինիստրութեան կից հիմնուած առեւտրական նաւազնացութեան խորհուրդը, առեւտրական նաւազնացութեան բաժինը և նաւահանգստային գործերի կօմիտէն, դրանց ենթակայ բոլոր հիմնարկութիւններով հանուում են ֆինանսների մինիստրութեան կազմից և դառնում առանձին ինքնազոյւս պետական հաստատութեան Առեւտրական նաւազնացութեան և նաւահանգիստների Գլխաւոր Վարչութիւն՝ անուն տալի։ Այդ Գլխաւոր Վարչութեան կառավարչապետին տրուում են այն իրաւունքները և պարտաւորութիւնները, որ այժմ յատկացրած են առեւտրական նաւազնացութեան և նաւահանգիստների նկատմամբ—ֆինանսների մինիստրին, իսկ նաւահանգստներում, տեխնիկական մասերում—ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին։

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայլովիչը նշանակուած է Կառավարչապետ առեւտրական նաւազնացութեան և նաւահանգիստների։

Դեկտ. 6-ին լրագրներում տպուած էր հետեւեալ Բարձրագոյն հեռագիրը ներքին գործոց մինիստրին.

„Վերադարձէ՛ք Սիբիրից ուսանողական անկարգութիւնների համար արսորուածներին։ Առայժմ նրանք պէտք չէ ապ-

բնն բարձրագոյն դպրոցներ ունեցող քաղաքներում, բայց այնու-  
ամենայնիւ պէտք է հոգալ, որ վերադարձրուած երիտասարդ-  
ները ըստ կարելոյն գտնուէին իրանց ընտանիքների հոգաբար-  
ձութեան ներքոյ և կարգապահութեան ընտելացնող պայմաննե-  
րի մէջ՝:

Անդրկասպեան երկրում տեղի ունեցած երկրաշարժը,  
դեկտ. 3-ին, առաւօտեան մօտ ժամը 4-ին, իսպառ քարուքանդ  
է արել Անդիժան քաղաքը: Փլատակների տակ մնացել են աւե-  
լի քան 500 զոհեր: Երկրի ցնցումները զգալի էին նաև Թիւր-  
քաստանի միւս կէտերում՝ (Թաշկենդ, Կօկանդ, Նոր-Մարգելան):  
Անդիժանը Ֆերգանեան շրջանի այն կէտերից էր, ուր բամբա-  
կի արդիւնաբերութիւնը և առևտուրը մեծ ծաւալ են ստացել: